«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ **Հայոց պատմություն**

Մասնակից՝ **Աթոյան Տաթևիկ**

Ղեկավար՝ **Սաֆարյան Արմինե**

Թեմա՝ **Պատմության ուսուցչի մասնակցությունը հաստատության առարկայական մասնախմբի աշխատանքներին**

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ՊԱՐԱԳՐԱՖՆԵՐ/ՄԱՍԵՐ..... 6

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ..... 6

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ..... 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 13

Եզրակացություն..... 13

Առաջարկություններ..... 14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 15

ՀԱՎԵԼՎԱԾ..... 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակը և հետազոտական հարցը՝ հետազոտության նպատակն է մեթոդական աշխատանքների ուսումնասիրությունը դպրոցում , օրինակով ցույց տալ և ապացուցել, թե համակարգված և համագործակցային աշխատանքը յուրաքանչյուր մեթոդմիավորման ներսում որքան դրական ազդեցություն կարող է ունենալ ուսումնական հաստատության գործունեության վրա: Հետազոտական աշխատանքի հարցը հետևյալն է՝ «Նմանատիպ աշխատանքով հնարավո՞ր է ապահովել ուսուցիչ-աշակերտ կապը և բարձրացնել ուսումնառության որակը»:

Թեմայի կարևորությունը և նշանակությունը թիրախային խմբի համար՝ Ձևակերպել մեթոդական միավորման՝ որպես խորհրդակցական մարմնի կառուցվածքն ու հիմնական գործառույթները դպրոցում, հիմնավորել մեթոդական միավորումների անհրաժեշտությունը դպրոցում, օրինակներով ցույց տալ պատմության ուսուցչի կատարված աշխատանքների կարևորությունն ու արդյունավետությունը:

Որ առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի իրականացմանը. Մեթոդական աշխատանքի ժամանակակից մակարդակի ապահովման համար կրթական հաստատությունում կարևոր է կազմակերպել աշխատանք՝ ուսուցիչներին նորմատիվ փաստաթղթերի, մեթոդական և առարկայական նոր գրականության ծանոթացման ուղղությամբ: Մեթոդմիավորման նիստերում կարելի է ուշադրություն հրավիրել այն հարցերին, որոնք կապված են հանձնարարականների, հուշագրերի, ծրագրի առավել բարդ թեմաների քայլաշարի կազմմանը, առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրմանն ու տարածմանը: Անհրաժեշտ է մանկավարժական փորձին վերաբերվել զգուշությամբ ու խնամքով և հաշվետվությունների, հոդվածների տեսքով դրանք տեղադրել մեթոդական «գանձարանում»: Հնարավոր է կազմակերպել դասապլանների, ստեղծագործական աշխատանքների, զննական միջոցների, լավագույն տետրերի ցուցահանդեսներ: Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլան-գրաֆիկ: Մեթոդմիավորման աշխատանքում մեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը:

Մեթոդմիավորման աշխատանքներում կարևոր ենք համարում թվային գրագիտություն/տեխնոլոգիաների ինտեգրումը՝

- Մանկավարժները պետք է թվային գրագետ լինեն և կարողանան տեխնոլոգիական գործիքները հարմարեցնեն պատմության դասավանդման համար: Սա ներառում է նախագծման աշխատանքների վրա հիմնված տարբեր գործիքների առանձնահատկությունները, ֆունկցիոնալությունները և կրթական առավելությունների ըմբռնումը:
- Մանկավարժները պետք է անխափան կերպով ինտեգրեն թվային ռեսուրսները նաև մեթոդմիավորման աշխատանքների մեջ , որպեսզի այդ գործիքները լրացնեն ուսումնական ծրագիրը և ընդլայնեն պատմության ուսուցման նպատակները:
- Մանկավարժները պետք է ստեղծեն կամ ընտրեն գրավիչ բովանդակություն, որը ներգրավում է աշակերտներին՝ միաժամանակ համապատասխանեցնելով կրթական նպատակներին: Սա ներառում է տեխնոլոգիայի օգտագործումը պատմության ուսուցման ինտերակտիվ և իմաստալից գործողությունների ձևավորման համար:
- Գնահատում և գնահատումը ներառում է թվային գնահատման գործիքների օգտագործում, աշակերտների ձեռքբերումներին հետևելը և նրանց հմտությունների զարգացման վերաբերյալ հետադարձ կապի ապահովումը:
- ՈՒսուցիչները կարող են հանդիպել տեխնիկական մարտահրավերների մեթոդմիավորման աշխատանքներին նորեկներին ինտեգրելիս , իսկ թվային գրագետ լինելը նրանց հնարավորություն է տալիս լուծել խնդիրները, ուսումնասիրել լուծումները և ապահովել սահուն իրականացում:
- Մեթոդմիավորման աշխատանքների արդյունավետ կազմակերպումը պահանջում է դասավանդման նորարարական մոտեցումներ: Մանկավարժները պետք է ստեղծագործաբար համատեղեն ավանդական մանկավարժական մեթոդները թվային գործիքների հետ՝ պատմության ուսուցման արդյունավետ և գրավիչ փորձառություններ ստեղծելու համար:

ՈՒսուցչի մասնակցությունը հաստատության առարկայական մասնախմբի աշխատանքներին թեմային , սովորաբար անդրադառնում են «Կրթական տեխնոլոգիաների ինտեգրում», «Թվային մանկավարժություն» կամ «Տեխնոլոգիաներով ընդլայնված ուսուցում» վերապատրաստման թեմաներին: Այս վերապատրաստման թեմաները կենտրոնանում են ուսուցիչներին գիտելիքներով և հմտություններով հագեցնելու վրա, որոնք անհրաժեշտ են տեխնոլոգիաները, ներառյալ մեթոդմիավորման աշխատանքներին արդյունավետորեն մասնակցելու և ինտեգրելու իրենց ուսուցման պրակտիկային:

1. **Կրթական տեխնոլոգիաների ինտեգրում:** Այս վերապատրաստման թեման կենտրոնանում է այն բանի վրա, թե ինչպես կարող են մանկավարժները ինտեգրել կրթական տեխնոլոգիաների տարբեր ձևեր, ներառյալ թվային գործիքներն ու հարթակները, իրենց ուսումնական ռազմավարությունների մեջ: Հումանիտար առարկաների ուսուցման մեջ գնահատման տեխնոլոգիաների ինտեգրումը պատկանում է այս կատեգորիային, քանի որ մանկավարժները սովորում են, թե ինչպես օգտագործել գնահատման տեխնոլոգիաները պատմության և հասարակագիտության դասերին ներգրավվածությունը, ինտերակտիվությունը և ուսուցման արդյունքները բարձրացնելու համար:

2.Թվային մանկավարժություն: Թվային մանկավարժության թրեյնինգը ուսումնասիրում է, թե ինչպես կարող են փոխակերպվել ուսուցման և ուսուցման մոտեցումները թվային գործիքների միջոցով: Պատմության ուսուցչի մեթոդմիավորման աշխատանքներին ինտեգրումը համապատասխանում է այս թեմային՝ ցույց տալով, թե ինչպես կարող են մանկավարժները վերանայել իրենց մանկավարժական մեթոդները՝ ներառելով ինտերակտիվ և հետազոտության վրա հիմնված գործողություններ՝ ստեղծելով պատմության ուսուցման դինամիկ և արդյունավետ միջավայր:

3.Տեխնոլոգիաների միջոցով ընդլայնված պատմության ուսուցում: Այս մասնագիտացված վերապատրաստման ոլորտը հատուկ անդրադառնում է, թե ինչպես կարելի է օգտագործել տեխնոլոգիան՝ բարելավելու պատմության ուսուցումը: Այն ընդգրկում է թվային գործիքների մի շարք, ներառյալ պատմության ուսուցման հավելվածները, առցանց ռեսուրսները և գնահատման տեխնոլոգիաները: Այս դասընթացի ընթացքում ուսուցիչները սովորում են, թե ինչպես ինտեգրել այս տեխնոլոգիաները՝ նպաստելու տվյալ թեմայի յուրացմանը, հաղորդակցման հմտություններին և մշակութային ըմբռնմանը:

ՊԱՐԱԳՐԱՖՆԵՐ/ՄԱՍԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող գլխավոր կառույցը առարկայական մեթոդմիավորումն է: Այն նպաստում է ուսուցիչների մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը: Պատմության մեթոդմիավորումների մեթոդական աշխատանքը կարող է ունենալ կազմակերպման հետևյալ ձևերը.

- Դասախոսություն,
- Սեմինար,
- ստեղծագործական բանավեճ,
- կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ,
- մեթոդական մրցույթներ,
- մեթոդական վարպետության դասեր,
- բանավեճեր,
- որոնողա-ստեղծագործական աշխատանքներ, նախագծեր:

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում որոշակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը: Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում առանձնակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը:

Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլանգրաֆիկ: Ինչպես վերը նշել էինք՝մեթոդմիավորման աշխատանքում մեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը: Այս առումով անչափ կարևոր է յուրաքանչյուր ուսուցչի մասնագիտական որակները: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

Ուսուցչի մասնագիտական որակներից են՝

- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն,
- քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու , կատարելագործելու ցանկություն և կարողություն,
- սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձևավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն,
- դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն:

Հոգեբանները գտել են, որ միայն այն գիտելիքներն են դառնում համոզմունք, որոնք մարդն ինքնուրույն է ձեռք բերում: Եվ եթե գիտելիքների սկզբնական ընկալումը կայուն չէ, ապա հաջորդող աշխատանքը պետք է լինի անհատական և պետք է իրագործվի այն ծավալով ու տեմպով, որ անհրաժեշտ են յուրաքանչյուր անձի: Իսկ դա հնարավոր է միայն ինքնուրույն կրթական գործունեության պայմաններում: Առավել արդյունավետ ձևով այն կազմակերպել հնարավոր է մեթոդմիավորումների նիստերի ընթացքում՝ արդյունքները ներկայացնելով տարբեր ձևերով. զեկուցումներ, բաց դասեր, ստեղծագործական հաշվետվություններ: Այս բոլորը պլանավորվում է նախապես և վերահսկվում է մեթոդմիավորման ղեկավարի կողմից:

Ինչպե՞ս պետք է կազմակերպել մեթոդմիավորման աշխատանքը դպրոցում:

- Աշխատանքային պլանում պետք է առանձնացնել հիմնական ուղղությունները, օրինակ՝ ուսուցման որակի բարձրացում, դաստիարակչական գործընթացի կատարելագործում՝ միտված երեխայի անձի զարգացմանը:
- Մեթոդմիավորման աշխատանքն անհրաժեշտ է կառուցել ընդհանուր մանկավարժական խնդիրների շուրջ, որն այդ պահին ծառացել է դպրոցի առջև: Ընդհանուր թեմայի քննարկման ընթացքում մեթոդմիավորման նիստերում ցանկալի է կոնկրետացնել այն:
- Թեմայի որոշումից հետո անհրաժեշտ է նշել դրա գործնական ելքի ձևը. ելույթներ սեմինարներում, բաց դասի ընթացքում աշխատանքի փորձի ներկայացում և այլն:

Մեթոդական աշխատանքի ժամանակակից մակարդակի ապահովման համար կրթական հաստատությունում կարևոր է կազմակերպել աշխատանք՝ ուսուցիչներին նորմատիվ փաստաթղթերի, մեթոդական և առարկայական նոր գրականության ծանոթացման ուղղությամբ: Մեթոդմիավորման նիստերում կարելի է ուշադրություն հրավիրել այն հարցերին, որոնք կապված են հանձնարարականների, հուշագրերի, ծրագրի առավել բարդ թեմաների քայլաշարի կազմմանը, առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրմանն ու տարածմանը: Անհրաժեշտ է մանկավարժական փորձին վերաբերվել զգուշությամբ ու խնամքով և հաշվետվությունների, հոդվածների տեսքով դրանք տեղադրել մեթոդական «գանձարանում»: Հնարավոր է կազմակերպել դասապլանների, ստեղծագործական աշխատանքների, զննական միջոցների, լավագույն տետրերի ցուցահանդեսներ: Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլան-գրաֆիկ: Մեթոդմիավորման աշխատանքումմեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը: Մեթոդմիավորման աշխատանքի պլանավորման ընթացքում երաշխավորվում է ներառել հետևյալ հարցերը.

- Առարկայի տեսական և դասավանդման մեթոդիկայի հարցեր, հարցեր մանկավարժությունից և հոգեբանությունից (մասնագետների ելույթներ):

- Ծրագրում ընդգրկված բարդություն ներկայացնող հարցերի ուսումնասիրում և այդ կապակցությամբ մեթոդամանկավարժական գրականության իրազեկում:
- Նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում:
- Նոր դասագրքերի ուսումնասիրում:
- Երաշխավորությունների, հուշագրերի, զննական միջոցների մշակում:
- Միջառարկայական կապերի հարցեր:
- Տետրերի ստուգման հարցեր:
- Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման աշխատանք. սեմինարների կազմակերպում՝ գործնականության ապահովմամբ:
- Նպատակային փոխադարձ դասալսումներ, բաց դասեր:
- Ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և արդյունքների քննարկում:
- Սկսնակ ուսուցիչների հետ աշխատանքի կազմակերպում:
- Քննական նյութի նախապատրաստում:
- Սեմինարներ, խորհրդակցություններ:
- Առարկայական գիտագործնական համաժողովներ:
- Ինքնակրթության վերաբերյալ ուսուցիչների հաշվետվություններ:
- Մեթոդական նյութերի և մշակումների համակարգման կազմակերպում. դասապլաններ, ցուցահանդեսներ, թեմատիկ մշակումներ, դիդակտիկ նյութեր, զննական միջոցներ, սովորողների ստեղծագործական աշխատանքներ և այլն:
- Առարկայական արտադասարանական աշխատանքներ:

Ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի: Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայն կիրառելի է: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր,

արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչ հմուտ ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար: Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին համակարգել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով, ինչի արդյունքում աշխատանքը դառնում է համակարգված ու արդյունավետ:

Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝ նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների կրթության որակը: Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամ կոլեկտիվ եղանակով:

Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթության հիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Որպես փորձարարական դասարան ընտրել եմ Ոսկետափի ավագ դպրոցի 12-րդ դասարանը՝

- հետազոտվող դասարանում աշակերտներների թիվն էր 18 աշակերտ՝9 աղջիկ, 9տղա,
- աշակերտներն ունեին առաջադիմության ու զարգացման մոտավորապես միևնույն մակարդակը,
- հետազոտելի դասարանում ուսուցումն իրականացրել եմ Համագործակցային մեթոդի կիրառմամբ,
- Հետազոտության ընթացքում ուշադրության կենտրոնում եմ պահելու չորս աշակերտների, որոնք իմ կարծիքով կաշկանդված են և դժվարությամբ են մասնակցում դասերին:

Դպրոցի հետազոտելի 12-րդ դասարանում, ուր նպատակ եմ հետապնդում զարգացնել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմություն առարկայի դասավանդման ընթացքում , կիրառում եմ համագործակցային մեթոդը՝ որպես ռազմավարական գործիք: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ.դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Մեթոդի ընտրության վրա կարող են ազդել՝

- ուսուցման նպատակները և խնդիրները,
- նյութի բովանդակությունը,
- ուսումնական նյութի ծավալը և բարդությունը,
- նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունը և համագործակցային հմտությունների մակարդակը,

- աշակերտների տարիքային առանձնահատկությունները,
- ուսումնական ժամաքանակը,
- ուսուցման նյութատեխնիկական պայմանները,
- ուսուցիչ –աշակերտ փոխհարաբերությունները,
- աշակերտների թվաքանակը դասարանում և այլն:

Հետազոտության շրջանակներում փորձարարական դասարանում ընտրվել են՝

- Հայոց պատմության դասագրքի երկու թեմաներ: Գիտափորձի իրականացման համար կիրառման մեջ են դրվել իմ կողմից նախապես մշակված դասերի պլանները,
- հետազոտության համար հիմք է ընդունվել « Հանրակրթության պետական չափորոշիչը,
- հետազոտվող դասարաններում մանկավարժական հետազոտության արդյունքները չափվել են մեթոդդմիավորման կողմից մշակված հարցաշար-քարտերի վերլուծության հիման վրա:
- Ձևավորող գնահատման մեթոդները- «Համագործակցային ուսուցման մեթոդ», «ՏՀՏ գործիքների կիրառում», «Մուտքի քարտեր» ,«Հարցադարան» , «Գիտելիքների բուրգ», «Խմբագրական խորհուրդ», «Արտաքին և ներքին շրջանակներ», «Չորս անկյուններ», «Երեքրոպեանոց դադար», «Ելքի քարտեր», « Մեդալ» և այլն:

Փորձարարական դաս-1. Այսօրվա դասն էր ‹‹Վերակառուցման քաղաքականությունը:Արցախյան շարժում» թեման: Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով. բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ: Այնուհետև դասարանը տարասեռության սկզբունքով բաժանեցի չորս խմբերի: Խմբերից յուրաքանչյուրը ստանում է մեկ թեմա, և պետք է դրա վերաբերյալ ներկայացնի իր ունեցած գիտելիքները, աշխարհաքաղաքական ներքին և արտաքին իրադարձությունների համատեքստում, նախ թղթի վրա , հետո ներկայացնել բանավոր: Նախանշված ժամանակի ավարտից հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց թեման,

իրենց խմբի եզրակացությունը գրելով գրատախտակին: Բոլոր խմբերի ներկայացնելուց հետո համեմատականներ են տարվում այս չորս իրադարձությունների միջև, կատարվում է եզրակացություն: Ամբողջ դասի ընթացքում շեշտը դրվում է հերոսական կերպարների ու դրվագների վրա, վեր է հանվում ազգի և ժողովրդի լավագույն, վեհ կողմերի վրա, ուսուցանվում է, որպես օրինակ: Իմ նախանշած չորս աշակերտներից յուրաքանչյուրը ընդգրկված են խմբերից մեկում և աշխատում են համագործակցային ուսումնառության պայմաններում:

Փորձարարական դաս-2. Այսօրվա դասն էր ‹‹ Հայաստանի անկախության գործընթացը ›› թեման: Դասաժամն սկսվեց տնային աշխատանքի ստուգումով, բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները որոշակի սխալներով: Քննարկվեց տնային աշխատանքի սխալները , տրվեց բանավոր հետադարձ կապ: Այնուհետև դասարանը տարասեռության սկզբունքով բաժանում է երկու խմբերի: Խմբերից յուրաքանչյուրը ստանում է մեկ թեմա, և պետք է դրա վերաբերյալ ներկայացնի իր ունեցած գիտելիքները, աշխարհաքաղաքական ներքին և արտաքին իրադարձությունների համատեքստում: Նախանշված ժամանակի ավարտից հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց թեման, իրենց խմբի եզրակացությունը գրելով գրատախտակին:

Բոլոր խմբերի ներկայացնելուց հետո համեմատականներ են տարվում այս երկու իրադարձությունների միջև: Ամբողջ դասի ընթացքում շեշտը դրվում է հերոսական կերպարների ու դրվագների վրա, վեր է հանվում ազգի և ժողովրդի լավագույն, վեհ կողմերի վրա, ուսուցանվում է, որպես օրինակ: Իմ նախանշած չորս աշակերտներից յուրաքանչյուրը ընդգրկված են խմբերից մեկում և աշխատում են համագործակցային ուսումնառության պայմաններում: Յուրաքանչյուր աշակերտ պարտադիր արտահայտում է իր կարծիքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտական աշխատանքը գալիս ենք հետևյալ եզրահանգումների՝

- Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական ինքնակրթության, ինքնուրույնության զարգացմանը, ինչը շատ կարևոր է նոր աշխարհում: Հետևաբար ուսուցչի մասնագիտական կարողունակությունների զարգացումն արդի կրթական պահանջների հենքն է:
- Դպրոցի համար կարևոր է կարողունակ ուսուցիչ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները, այդ թվում կարևորում եմ հումանիտար առարկաների, և հատկապես պատմության ուսուցիչների դերը այս հարցում:
- Մեր ուսումնասիրության արդյունքում փաստեցինք, որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար շատ կարևոր է գործընկերների հետ համագործակցությունը առարկայական մասնախմբերի

աշխատանքների շրջանակներում: Այդ աշխատանքների ճիշտ կազմակերպման արդյունքների մասին խոսեցինք փաստերով: Սակայն պետք է նաև նշել, որ եղել են խնդիրներ, որոնք հաղթահարվել են մասամբ:

- Կարևորում եմ հատկապես զեկույցների թեմաների արդիականացումը, որը կարող է օգնել մեթոդմիավորման բոլոր անդամներին անկախ փորձառությունից:
- Իրական և ճիշտ կազմակերպված դասալսումների անաչառ քննարկում կարող է լինել մեծ խթան ուսուցչի համար:
- Ուսումնական պրոցեսի արդյունավետության համար մեծ արժեք են ներկայացնում մեթոդական և առարկայան սեմինարիների մասնակցության շարունակականությունը և փորձի փոխանակումը գործընկերի հետ:
- Անհրաժեշտ ենք համարում վերահաստատել մեր այն պնդումը, որ առարկայական մեթոդական միավորումներում համակարգված աշխատանքի արդյունքում ուսուցիչը կարող է ունենալ մեծ նվաճումներ, հատկապես՝ բարձր ու նոր որակի ուսումնական գործընթաց:
- Նոր մեթոդների կիրառմամբ հնարավոր է վերացնել խոչընդոտները՝ ի նպաստ կրթության որակի բարձրացման,
- Առանձնահատուկ կարևոր են ժամանակակից կրթության ոլորտում աշակերտների կարողունակությունների՝գիտելիքների, հմտությունների ,դիրքորոշման, արժեքային համակարգի գնահատումն ու արժևորման ձևերը,ստուգման տեսակներն ու միջոցները:
- Կրթական համակարգի ներկատարելագործումը որոշակի ջանքեր է պահանջում ուսուցչից: Այդպիսի միասնական ջանքերի արդյունքում է, որ տարբեր անհատներ ստեղծել և մեզ են ընձեռել բարեկեցիկ կյանքով ապրելու ,տեղաշարժվելու,հաղորդակցվելու ժամանակակից պայմաններ:Սոսկ սպառողի դերում չհայտնվելու համար մեր հետազոտություններն ու մոտեցումները պետք է համադրենք իրենց արդարացված միջազգային ուսանելի օրինակների հետ և հավելենք մերը:

Առաջարկություններ

Ամփոփելով հետազոտական աշխատանքը արել ենք հետևյալ առաջարկությունները, որը պետք է ապահովվի կրթության բոլոր օղակների համագործակցությամբ.

- Մանկավարժների վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- Ուսումնական ծրագրերի ինտեգրում և հավասարեցում,
- Անհատականացում և հարմարեցում,
- Լավագույն փորձի փոխանակում,
- Այլ տեղեկատվություն :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876, ՀՀ կառավարության որոշում:
2. https://old-lib.armedu.am/resource/846, Պաշարների շտեմարան:
3. https://hy.cultureoeuvre.com/10762739-how-to-choose-an-interesting-topic-for-yourreport:
4. Մանկավարժական ռազմավարություն: Վերցված է edutechwiki.unige.ch կայքից:
5. https://www.youtube.com/watch?v=K98EVPFrxMQ
6. Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:
education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Մեթոդմիավորման կողմից հաստատված դասապլան

ՈՒսուցիչ՝ Աթոյան Տաթևիկ

Առարկա՝	Հայոց պատմություն	Ամսաթիվ	12.09.2023	Կիսամյակ	II	Դասարան	XII
Թեմա՝	Հայաստանի անկախության գործընթացը						
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, ՀԽՍՀ քաղաքական քարտեզ, ՀՀ քաղաքական քարտեզ:*						
Դասի նպատակը՝	Ակադեմիական՝ Աշակերտը, իմանա, որ՝ • Աշակերտը, իմանա, որ՝ **1990թ. մայիսի 20-ին անցկացվեց այլընտրանքային ընտրություններ,** • 1990թ օգոստոսի 23-ին ԳԽ ընդունեց «Հռչակագիր ՀՀ անկախության մասին», • ՀԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի հանրապետություն: Սոցիալական՝ • **1991թ. դեկտեմբերի 8-ին ԽՍՀՄ-ը փլուզվեց,** • **1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում ստեղծվեց ԱՊՀ-ն:**						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտը կարողանա՝ • Գնահատել տվյալ պահի ռազմաքաղաքական իրողությունները, • Նկարագրել այդ պատմական պահը, • Կապեր գտնել Հայաստանի և մյուս երկրների մեջ, • Վերլուծել միութենական մյուս երկրների վիճակը տվյալ պահին , • Համեմատել նրանց վարած քաղաքականությունը , • Եզրակացության գալ ընդհանուր իրավիճակի մասին:						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք 15 րոպե	Աշակերտները դասարանը պատրաստում են խմբային աշխատանքի համար և սպասում են ուսուցչի հրահանգներին, Ներկայացնում են տնային աշխատանքները, Խմբերից յուրաքանչյուրը ստանում է մեկ թեմա, և պետք է դրա վերաբերյալ նախ թղթի վրա , այնուհետ բանավոր ներկայացնի իր ունեցած գիտելիքները, աշխարհաքաղաքական ներքին և արտաքին իրադարձությունների համատեքստում: Նախանշված	Ողջունում է դասարանին, կատարում է ներկա բացակա, Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը, Աշակերտներին բաժանում է երկու խմբերի , բացատրում է աշխատանքի կանոնները և հանձնարարում էաշխատել: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է մեկ թեմա՝ Հայաստանի անկախացումը հայերի տեսակետից և Հայաստանի անկախացումը Ռուսաստանի տեսակետից, հանձնարարում է այդ	*1. Ե՞րբ անցկացվեցին այլընտրանքային ընտրություններ:* *2. Ե՞րբ ընդունվեց անկախության մասին հռչակագիրը:* *3. Ե՞րբ փլուզվեց ԽՍՀՄ-ը:* *4.Ո՞ր երկրների մասնակցությամբ կազմավորվեց ԱՊՀ-ն:* *5. Ո՞ր պետությունները հռչակեցին իրենց անկախությունը;*	*Հարցադրումների մեթոդ*

12րոպե	ժամանակի ավարտից հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց թեման, իրենց խմբի եզրակացությունը գրելով գրատախտակին: Բոլոր խմբերի ներկայացնելուց հետո համեմատականներ են տարվում այս տեսակետների միջև, կատարվում է եզրակացություն:	թեման ներկայացնել աշխարհաքաղաքական թե՛ ներքին, թե արտաքին համատեքստում: Խմբերում աշխատելու համար տրվում է 15 րոպե: ՈՒսուցիչը հերթով մոտենում է խմբերին, անհրաժեշտության դեպքում ցուցումներ է տալիս, կատարում է շտկումներ: Ամբողջ դասի ընթացքում շեշտը դրվում է հերոսական դրվագների և կերպարների վրա, վեր է հանվում ազգի ու ժողովրդի լավագույն կողմերը, ուսուցանվում է, որպես լավագույն օրինակ: Նոր թեմայի		*Համագործակցային ուսուցում* *Զրույցի մեթոդ* *Քարտեզագրման մեթոդT* *Հարց ու պատասխանի մեթոդ*

Յրոպե		հաղորդում աշակերտների մասնակցությամբ ՈՒսուցիչը կիրառում է « Մտագրոհ » մեթոդը, որպեսի հասկանա, արդյո՞ք խմբերը լսում էին միմյանց և կարո՞ղ են պատասխանել նաև դասի մյուս հատվածներին վերաբերող հարցերին: ՈՒսուցիչը գնահատում է լավ և ակտիվ աշխատող խմբերի աշակերտներին և առանձին աշակերտների:		*Մտագրոհի մեթոդ*
Տնային աշխատանք	*Դասը հանձնարարել պատմել, աշխատանքային տետրերում դուրս գրել ժամանակագրական և հետաքրքիր փաստական տվյալներ:*			